ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2012 թվականի թիվ 27 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ ու 3-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2011 թվականի 2-րդ կիսամյակի ծառայողական գործունեության գնահատման դրական արդյունքները՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պարգևատրել 70 տոկոս դրույքաչափով՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված "Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում" հոդվածով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին կատարել վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012 թ. փետրվարի 22
ք. Իջևան